Հայաստանի Հանրապետություն

Արմավիրի մարզ
գ. Հայկաշեն

N-09

«01» մարտի 2012 թ.

Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2012թվականի փետրվարի 28-ի ավագանու թիվ 01 նիստի որոշումները:

Առդիր *10* թերթ:

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2010-12
«02» 03 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

2012թվականի փետրվարի «28» N- 01

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի փետրվարի 28-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանի՝

1.Մանուկյան Ավետիք

2.Մարտիրոսյան Միհեր

3.Սերոբյան Անդրեաս

4.Հովհաննիսյան Գառնիկ

5.Հարությունյան Զավեն

Համայնքի ղեկավար՝ Բ. Հովհաննիսյան

2012թվականի փետրվարի <<28>>

գ. Հայկաշեն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Հայկաշենի գյուղական համայնքի
2012թ. փետրվարի 28-ի ավագանու
թիվ 01 նիստի N 01 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2012թ. փետրվարի 28-ի ավագանու թիվ 01 նիստի օրակարգը հաստատելու մասին .

զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2012 թվականին գումարվելիք ավագանու հերթական նիստերի ժամանակացույցը սահմանելու մասին.

զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

2012թվականի փետրվարի «28» **N -02**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՒՄԱՐՎԵԼԻՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ, այն է՝ 2012թվականի փետրվարի 28-ին, ապրիլի 28-ին, հունիսի 28-ին, օգոստոսի 28-ին, հոկտեմբերի 28-ին և դեկտեմբերի 28-ին:
2. Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:
3. Ավագանու ընդունած որոշումները 7-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանի՝

1.Մանուկյան Ավետիք
2.Մարտիրոսյան Միհր
3.Սերոբյան Անդրիաս
4.Հովհաննիսյան Գառնիկ
5.Հարությունյան Զավեն

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

2012 թվականի փետրվարի « 28 »
գ Հայկաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

2012թ փետրավրի « 28 » N-03-Ն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանի՝

1.Մանուկյան Ավետիք
2.Մարտիրոսյան Միհեր
3.Սերոբյան Անդրեաս
4.Հովհաննիսյան Գառնիկ
5.Հարությունյան Զավեն

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

2012թ փետրավրի « 28 »

գ. Հայկաշեն

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՁԵՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի
N 03/Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՁԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՀԱՅԿԱՁԵՆԻ գյուղական համայնքի 2011թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 3894.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 3815.1 հազար դրամ կամ կատարվել է 98.0 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 2714.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 2660.0 հազար դրամ կամ կատարվել է 98.0 %-ով:

2, 1,Գույքահարկի պլանով նախատեսված 1180.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 1155.1 հազար դրամ կամ կատարվել է 97.9 %-ով:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով, այդ թվում

1. Տեղական տուրքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով, այդ թվում՝

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի

դիմաց փաստացի մուտքագրվել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 688.5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 398.0 հազար դրամ կամ կատարվել է 57.8 %-ով, այդ թվում՝

1. գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 88.5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 98.0 հազար դրամ կամ կատարվել է 110.7 %-ով:

2. պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման գծով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 300.0 հազար դրամ կամ կատարվել է 50.0 %-ով:

4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 16161.0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 16161.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2011թ. վարչական բյուջեով ախատեսված 20843.9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 20474.1 հազար դրամ կամ կատարվել է 98.2 %-ով:

ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2011թ. բյուջեն սեփական եկամուտների գծով նախատեսված 4082.9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4013.1հազար դրամ կամ կատարվել է 98.3 %-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1.ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2011թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 14141.9 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 13535.3 հազար դրամ կամ կատարվել է 95.7 %-ով:

ա) տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 14141.9 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 13535.3 հազար դրամ կամ կատարվել է 95.7 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման 04բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 300.0 հազար դրամ կամ կատարվել է 50.0 %-ով:

3.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 959.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 958.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

6.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 1800.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1800.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

8. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2150.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2150.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

2011թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 19649.9 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 18743.3 հազար դրամ կամ կատարվել է 95.4 %-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2011թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 1561.6հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1561.0 **հազար** դրամ կամ կատարվել է 100.0 %-ով, այդ թվում՝

1. տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված

1561.9հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1561.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

Հայկաշենի գյուղական համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդը (դիֆիցիտը) նախատեսված 367.6 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 537.4 հազար դրամ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N03- Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N03-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի պահանջներով՝ միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N03-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. Հովհաննիսյան